«ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ՈՉ ԹԵ ԱՆՑՅԱԼԻ, ԱՅԼ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ»

«Ջուհուրիեթ» օրաթերթի Վաշինգթոնի թղթակից Ուֆուկ Գյուլդեմիրը հարցազրույց է վարել ԽՍՀՄ-ից արտաքսված, ներկայումս ԱՄՆ-ում բնակվող ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆԻ հետ:

«ՋՈՒՄՀՈՒՐԻԵԹ»— Ի՞նչ եք մտածում ղարաբաղյան դեպքերի մասին:

ՀԱՅՐԻԿՅԱՆ— Խորհուրդները միտումնավոր ձգձգում են Ղարաբաղի վիճելի հարցը, որպեսզի խոչընդոտեն հասարակությանը տեսնելու հայերի ու ադրբեջանցիների իրենց ճակատագիրը որոշելու իրավունքը: Մենք զգացինք այդ վիճակը սումգայիթյան դեպքերից հետո: Մենք ասացինք ադրբեջանցիներին, որ իրենք որպես զենք են օգտագործվում Խորհուրդների կողմից և կոչ արեցինք ընդհանուր համաձայնության գալ: Սակայն Մոսկվան տապալեց այդ պլանները և վռտարեց ինձ երկրից: Կոպիտ հաշվումներով Ղարաբաղն ունի այնքան բնակչություն, որքան՝ Լյուքսեմբուրգը, այդ պատճառով հարցը պետք է լուծվի հանրաքվեի միջոցով: (...)

«ՋՈՒՄՀՈՒՐԻԵԹ»— Ի՞նչ եք մտածում Թուրքիայի մասին:

ՀԱՅՐԻԿՅԱՆ— Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է: Դա մեզ համար աշխարհի մի մասը է: Նա դիմել է Ընդհանուր շուկայի մեջ մտնելու խնդրանքով: Անցյալում որոշակի տհաճ բախումներ են եղել թուրքերի ու հայերի միջև, բայց մենք չպետք է մոռանանք, որ հայկական վերջին անկախ պետականությունը կլանվեց ռուսների կողմից, այլ ոչ՝ թուրքերի: Հայ ժողովուրդն այսօր ստրկացված է ոչ թե Թուրքիայի, այլ՝ Մոսկվայի կողմից:

Ցավալի է, որ Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Միության վերաբերյալ իմ հայացքները հավանություն չեն գտնում Միացյալ Նահանգներում բնակվող հայերի կողմից: Նրանք ԽՍՀՄ-ին համարում են ռեալ դաշնակից Թուրքիայի դեմ պայքարելու համար: Բայց դա այդպես չէ:

Իհարկե, այստեղ կա նաև եղեռնի հարցը, որը ԽՍՀՄ-ը մինչև այժմ թողնում է բաց: Այս հարցը միշտ էլ ծնել է որոշակի լարվածություն հայերի և թուրքերի միջև:

Դժբախտաբար նրանց միջև երկար ժամանակ շփում չի եղել: Ամեն տեսակի հարաբերությունների բացակայությունը հանգամանքների ռեալ արդյունք է, ուրիշ կերպ լինել չէր կարող:

«ՋՈՒՄՀՈՒՐԻԵԹ»— Ինչպե՞ս կարող են թուրքերը ձեզ հետ հարաբերություններ հաստատել, եթե դուք շարունակում եք տարածքային պահանջներ առաջ քաշել:

ՀԱՅՐԻԿՅԱՆ— Մենք ապրում ենք ոչ թե անցյալի, այլ ապագայի համար: Մենք պետք է միշտ էլ հաշվի առնենք մեր հետագա շահերը: Հաճախ շատ քիչ բան է հարկավոր, որպեսզի երկու ազգերը իրար հասկանան: Դա վերաբերում է նաև միջազգային հարաբերություններին: Անցյալում շատ վատ բաներ են կատարվել, սակայն անցյալի այդ անհաջողությունները չպետք է մթագնեն մեր ապագան: Այսօրվա Թուրքիան դեմոկրատական աշխարհի մի մասն է: Նրան չի կարելի համեմատել նույնիսկ ԽՍՀՄ-ի հետ: Հայերը Թուրքիայում ունեն եկեղեցիներ ու դպրոցներ: Իհարկե, կան ոչ քիչ դժվարություններ, բայց այդ հաստատությունները գործում են, որովհետև Թուրքիան Արևմուտքի մի մասը է, և առաջ քաշված հարցերը արագ լուծվում են: Միևնույն ժամանակ 2 միլիոն հայեր, որոնք ապրում են ԽՍՀՄ-ում, Հայաստանի տարածքից դուրս, չունեն այդպիսի իրավունքներ: Նրանք չունեն ոչ դպրոցներ, ոչ էլ թերթեր:

«ՋՈՒՄՀՈՒՐԻԵԹ»— Ինչպե՞ս են ընդունվում Թուրքիայի մասին ձեր հայացքները Հայաստանում:

ՀԱՅՐԻԿՅԱՆ— Սա հայկական դեմոկրատական շարժման տեսակետն է: Ամեն ոք գիտի, որ Մոսկվան կանխամտածված վիժեցնում է հարաբերությունները Հայաստանի և Թուրքիայի միջև: Եթե ես թուրք լինեի, ինձ վրդովված կզգայի, որ ԽՍՀՄ-ը ինձ օգտագործում է որպես խրտվիլակ հայերին վախեցնելու համար: Մի անգամ, երբ հարցազրույցում էին բանտում, հարց տվեցին. «Ինչո՞ւ եք դուք շարունակում անկախություն պահանջել, չէ՞ որ Թուրքիան ձեզ կճզմի»:

«ՋՈՒՄՀՈՒՐԻԵԹ»-ի թղթակցի ասելով, հարցազրույցի վերջում Պ. Հայրիկյանը խնդրեց Թուրքիային հաղորդել հետևյալ ուղերձը. «Ամեն անգամ, երբ հայերը խոսում են 1915 թվականի մասին, դա չի նշանակում, որ ներկայիս թուրքերն ու թուրքական կառավարությունը պետք է պատասխանատու համարվեն»:

«ՋԱՐԹՈՆՔ», 8 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1989 թ.